ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ,
գ. Զարիշատ

<<15>> դեկտեմբերի 2014 թվական
Զարիշատ
Հեռ. (093) 87-88-82
N: **20**

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցոլակյան

Կից ներկայացնում ենք ՀՀ Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 20-Ա, 21-Ա, 22-Ա, 23-Ն և 24Ն որոշումները:

Առդիր՝ 15 թերթ:

Հարգանքով՝ Հ. Խորիկյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ *05900825*

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹՂԹԻ
Մտից թիվ 10843-14
15 12 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Ի

ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N _____

«_15__» ____12_____ 2014թ.

գ. ԶԱՐԻՇԱՏ

☎ /094/ 87-88-82

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարների հաշվարկ

Վարելահող –	2-րդ կարգ	204.4 X 5790=1183.5
	3-րդ կարգ	492.0 X 3810=1874.5
	4-րդ կարգ	249.3 X 2340= 583.4
Խոտհարք -	2-րդ կարգ	321.0 X 5625=1805.6
	3-րդ կարգ	257.6 X 4020=1035.4
Արոտ -	2-րդ կարգ	440.0 X 4770=2098.8
	4-րդ կարգ	55.0 X 2040=112.2
	5-րդ կարգ	1049.4 X 675=703.3
ԸՆԴԱՄԵՆԸ՝		9396.7

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԽՈՐԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 20-Ա

<< 12 >> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի սեփականության ամենամյա թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՍՄԵՆԱ՝ կողմ .....
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՂՍԱՆ՝ կողմ .....
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՍԿԱՆՈՒՇ՝ կողմ .....
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ՝ կողմ .....
ՏՈՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ՝ կողմ .....

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<<12>> դեկտեմբերի 2014թվական
Գյուղ Զարիշատ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Զարիշատի համայնքի
ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի
թիվ 21-Ա որոշման

/հազար դրամ/

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարին	Քանակը	Արժեքը
1	Գյուղապետարանի վարչական շենք		1	350.0
2	Գրասեղան		2	6.7
3	Տումբոչկա		2	15.0
4	Աթոռ		10	8.5
5	Երկաթյա պահարան		1	4.2
6	Գևապահարան		1	12.0
7	Բնակելի շենքեր		23	2300.0
8	Համակարգիչ	24.09.2010թ	1	373.0
9	Ավտոմեքենա «Նիվա»	20.10.2010թ	1	3850.0
10	Օֆիսային սեղան	13.12.2010թ	1	182.3
11	Համակարգչային սեղան	13.12.2010թ	1	40.0
12	Օֆիսային աթոռ	13.12.2010թ	1	83.3
13	Օֆիսային աթոռ	13.12.2010թ	1	100.0
14	Ակումբի վարչական շենք		1	164.0
15	Աթոռ		8	32.0
16	Գիրք		814	81.4
17	Գրապահարան		1	4.2
18	Գիրք	01.12.2004թ	21	39.5
19	Մանկապարտեզի վարչական շենք		1	186.0
20	Կախիչ		2	1.5
21	Մահճակալ		3	6.5
22	Պահարան		2	23.0
23	Սեղան երկտեղանի		4	7.6
24	Խողովակ 100 X 80	24.02.20132	4	

Համայնքի ղեկավար _____ Հ. ԽՈՐԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 21-Ա

<< 12 >> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 17 -Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 21.46 %-ի չափով՝ 142000 (մեկ հարյուր քառասուներկու հազար) դրամ, բարձր լեռնային հավելում 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ղեկավարի 2013 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին» թիվ 17 - Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՍՄԵՆԱ՝ կողմ .....

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՂՍԱՆ՝ կողմ .....

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՍԿԱՆՈՒՇ՝ կողմ .....

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ՝ կողմ .....

ՏՈՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ՝ կողմ .....

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<<12>> դեկտեմբերի 2014թվական
գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 22- Ա

<< 12 >> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ **2015** ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2013** ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ի ԹԻՎ 20 -Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի քանակը՝ 4 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի 2015 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ավագանու 2013 թվականի 16 դեկտեմբեր 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 20 -Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՍՄԵՆԱ՝ կողմ .....

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՂՍԱՆ՝ կողմ .....

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՍԿԱՆՈՒՇ՝ կողմ .....

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ՝ կողմ .....

ՏՈՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ՝ կողմ .....

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<<12>> դեկտեմբերի 2014թվական
Գյուղ Զարիշատ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զարիշատ համայնքի ավագանու 2014 թվականի
դեկտեմբերի 12 -ի թիվ 22-Ա որոշման

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Բարձր լեռնային հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ						
1	Աշխատակազմի քարտուղար	1	82000	57.74	8000	90000
2	Առաջատար մասնագետ	1	80000	56.33	8000	88000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ						
3	Հարկային գործակալ	1	71000	50.00	8000	79000
4	Ջրագծի հսկիչ	1	71000	50.00	8000	79000
Ընդամենը		4	304000	-	32000	336000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 23-Ն

<< 12 >> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի վարչական տարածքում 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 21-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՍՄԵՆԱ՝ կողմ .....

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՂՍԱՆ՝ կողմ .....

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՍԿԱՆՈՒՇ՝ կողմ .....

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ՝ կողմ .....

ՏՈՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ՝ կողմ .....

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՔԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<<12>> դեկտեմբերի 2014թվական
Գյուղ Զարիշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 23 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ յոթ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասներեք հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնութ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար մեկ հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տասնհինգ հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երեք հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ ութ հարյուր դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համարերեք հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար դրամ

4) մեկ ամսվա համար՝ քսանհինգ հազար դրամ

5) մեկ տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հարյուր դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հարյուր դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 24-Ն

<<12>> դեկտեմբերի 2014 թվական գյուղ Զարիշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատի համայնքի 2015թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԺԱՍՄԵՆԱ՝ կողմ .....

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՂՍԱՆ՝ կողմ .....

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՍԿԱՆՈՒՇ՝ կողմ .....

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ՝ կողմ .....

ՏՈՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ՝ կողմ .....

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ

<<12>> դեկտեմբերի 2014թվական
Գյուղ Զարիշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Զարիշատի համայնքի
ավագանու 2014թվականի դեկտեմբերի 20-ի
թիվ 24-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԻՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

Հ/հ	Եկամուտներ	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական մաս /հազար դրամ/
1	2	3	4	5
1000	Ընդամենը եկամուտներ	-	8167.2	8167.2
1100	Հարկեր և տուրքեր	7100	780.6	780.6
1110	Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	514.6	514.6
1112	Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար		514.6	514.6
1120	Գույքային հարկեր այլ գույքից	7136	266.0	266.0
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		266.0	266.0
1250	Դոտացիա	7331	4324.9	4324.9
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		3500.0	3500.0
1254	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		824.9	824.9
1330	Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	3061.7	3061.7

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ, ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հ/հ	Ծախսի նվանումները	Հոդվածի համարը	Ընդամենը /հազար դրամ/	Վարչական մաս /հազար դրամ/
1	2	3	4	5
4000	Ընդամենը ծախսեր		8167.2	8167.2
4050	Ընթացիկ ծախսեր		8167.2	8167.2
4100	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝			
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	5832.0	5832.0
4112	Պարգևատրումներ դրամական խրախուսումներ	4112	486.0	486.0
4210	Շարունակական ծախսեր, այդ թվում՝			
4212	Էներգետիկ ծառայություններ	4212	50.0	50.0
4213	Կոմունալ ծառայություններ	4213	60.0	60.0
4214	Կապի ծառայություններ	4214	66.0	66.0
4215	Ապահովագրական ծախսեր	4215	35.0	35.0
4220	Գործուղումների և շրջագայությունների ծախսեր		50.0	50.0
4221	Ներքին գործուղումներ	4221	50.0	50.0
4230	Պայմանագրային այլ ծառայություններ		85.0	85.0
4234	Տեղեկատվական ծառայություններ	4234	85.0	85.0
4250	Ընթացիկ նորոգում և պահպանում		80.0	80.0
4252	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	80.0	80.0
4260	Նյութեր		1450.0	1450.0
4261	Գրասենյակային նյութեր և հագուստներ	4261	120.0	120.0
4264	Տրանսպորտային նյութեր	4264	90.0	90.0
4521	Սուբսիդիաներ ոչ պետական ֆին կազմակերպ	4521	320.0	320.0
4600	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ		350.0	350.0
4634	Այլ նպաստներ բյուջեից	4729	350.0	350.0
4700	Այլ ծախսեր, այդ թվում՝			
	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններից	4819	10.0	10.0
4723	Պարտադիր վճարներ	4823	40.0	40.0
4771	Պահուստային միջոցներ	4891	493.2	493.2

ԶԱՐԻՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԼԵՏ ԽՈՐԻԿՅԱՆ